ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

05.12.2023 N 06/11.2/16089-2023

ՀՀ Կոտայքի մարզ,
Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

2023 թվականի հոկտեմբերի 31-ի
N Ե-6922 գրություն

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ է տրամադրվում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող 07-018-0125-0032 կադաստրային ծածկագրով 0.14072 հա մակերեսով հողամասը, ենթակայան կառուցելու համար, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերից էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է վերը նշված փոփոխությունն ընդգրկել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակվող ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծում ներառված Բալահովիտ բնակավայրի փաստաթղթում:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Գ-2673
05 » 12 2023 թ.